

ՄՇԱԿ

Խաղաղությունը բաց է առաջարկում 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարություն ընդունվում է ամեն լիզուով
Յայտարարությունների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպեկ:
Տ է Լ է Փ օ Ն № 253:

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ է Փ օ Ն № 253:

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձու թիւնը պատիւ
ունի յայտնել, որ ամիս 21-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 12-ին, Ներսիսեան
դպրոցում կատարվելու է դպրոցի հանգուցեալ հոգաբարձու:

ՊՕՂՈՍ ՄԷԼԻԻԲ - ԿԱՐԱԳԵՈՋԵԱՆԻ ՀՈԳԵԱՆԳԻՍԸ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տառն և վեց տարի համբերեցին. ինչ պատճառ-
աւով կը տայ թիւրքիս. Մեր հեռագիրները.
Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Օրվայ
հարցը. Ներսիսեան ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի նոր հնար-
անքան հեռագրութիւն. Նամակ Եւրոպայ. Ներ-
քին լուրեր. ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Անգլիայից. Նամակ Աւստրիայից. Հեռագիրներ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիւր-
քացի Հայաստանում:

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՅ ՏԱՐԻ ՀԱՄԲԵՐԵՑԻՒՆ

Թիւրքիս կարող է չը հաւատալ հայոց
պատրիարքի և հայ գործողների խօսքե-
րին. նա կարող է հայ ժողովրդի հեծն-
անքը խաբուսիկ և շինծու համարել. ի-
նչպէս նա իրաւունք չունի չը հաւատալու եւ-
րեք պետութիւնների Ռուսաստանի, Անգ-
լիայի և Ֆրանսիայի խօսքերին, և նրանց
առաջարկութիւններին...

Փառք Ալլահին, ամբողջ 16 տարի է
անցել Բերլինի կոնգրէսից յետոյ, և այդ 16
տարիներ ընթացքում երեք պետութիւն-
ները, նոյն իսկ ամբողջ եւրոպան ցոյց
տուեցին, որ իրանք բարեկամ են օսմանեան
պետութեան և պաշտպան նրա ամբողջու-
թիւնը պահպանելուն...

Եթէ չը լինէր այդ բարեկամութիւնը,
եթէ չը լինէր անկեղծ ցանկութիւն՝ ան-

խախտ պահպանելու թիւրքաց պետու-
թեան ամբողջութիւնը և գոյութիւնը, այն
ժամանակ, վաղուց, թէ Ռուսաստանը, որ
միշտ պաշտպան է հանդիսացել արեւելեան
քրիստոնեաներին, և թէ Անգլիան, որ
յայտնի պարտաւորութիւններ ունի այդ
քրիստոնեաների առաջ, Բոսֆոր կողմա-
րէն իրանց նաւերը՝ ստիպելու Բ. Դրան
յարգել պետութիւններին տուած խօսքը
և կատարել Բերլինի դաշնագրի յօդուած-
ները...

Սակայն ոչ Ռուսաստանը, ոչ Անգլիան և
ոչ էլ եւրոպական մի ուրիշ պետութիւն
այդ քայլը չարեցին. համբերեցին, սպասե-
ցին, որ վերջապէս մի օր Թիւրքիս կը
զգայ իր պարտքը, կը զգայ իր սխալը և
կը թիւթեացնէ հարստահարութիւնը, անարդար
կերպով հայածվող քրիստոնեաների վիճա-
կը: Եւ ահա, փոխանակ թիւթեացնելու այդ
վիճակը, փոխանակ կատարելու Բերլինի
դաշնագրով իր վրա առած պարտականու-
թիւնը, թիւրքաց կառավարութիւնը ստեղ-
ծեց Սասունի կոտորածը. այդ անշնչելի
արարքը թիւրքաց պատմութեան մէջ...

Ուրիշներն մեղադրելու առիթ չը կայ,
ոչ հայերը, ոչ եւրոպան մեղաւոր չեն, որ
16 տարի քննուց յետոյ՝ հայոց հարցը
նորից յարութիւն առաւ, և այս անգամ
աւելի կատարել, աւելի փառնաւոր կեր-
պով, քան երբ և ինչէ: Եթէ այդ բանում

կայ մէկը, որ մեղաւոր է. — դա հէնց ինքը
թիւրքաց կառավարութիւնն է...

Եւ ահա, չը նայած իրանց խաղաղասի-
րական քաղաքականութեան, չը նայած ի-
րանց անկեղծ բարեկամութեան գէպի
թիւրքիս, երեք պետութիւնները չը կա-
րողացան անտես առնել Հայաստանում կա-
տարված դէպքերը, չը կարողացան դիմա-
նալ արեան հոտին, որ փչում էր Սասունի
լեռներից, և այսօր պահանջում են Թիւր-
քիայից վերջ տալ անկարգութիւններին և
անվերջ զազանութիւններին...

Այո, կրկնում եմ, թիւրքաց սուլթանը
կարող է չը հաւատալ հայերի բողոքին,
կարող է չը շինծու համարել այն հեծնեան-
քը, որ դուրս է գալիս մի ամբողջ ժողո-
վրդի կրծքից. — բայց նա իրաւունք չունի
և չէ կարող անտես առնել պետութիւննե-
րի ձայնը, որ 16 տարի բարեկամական
խորհուրդներ տուց յետոյ, այլ ևս ան-
կարող լինելով դիմանալ մի ամբողջ քրիս-
տոնեայ ժողովրդի աղբիւսներին, — պահան-
ջում է վերջապէս լուծել հայոց հարցը...

ԻՆՉ ՊԱՏԱՍԽԱՆ ԿԸ ՏԱՅ ԹԻՒՐԻՒՆԻ (Gazette de Lauzanne)

Եթ ժամայ աւելի է, ինչ եւրոպան սոս-
կումով իմացաւ Հայաստանի սարսափելի
կոտորածները, որոնք կատարվել էին Սա-
սունի գնդաւորների թիւրք գործի ձեռքով:
սակայն հոգաւոր քննիչ յանձնաժողովը
մինչև այսօր չը կարողացաւ աւարտել
իր գործը:

Եւրոպական երեք մեծ պետութիւնները,
որոնք մասնակցեցին այդ քննութեան, այն
է Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան,
շատ լաւ գիտէին, որ եթէ նրանք սպա-

սնի քննիչների պաշտօնական զեկուցումին
Բ. Դրան վրա ազդելու համար, շատ եր-
կար պիտի սպասեն: Այդ պատճառով նը-
րանք առաջ անցան: Միմեանց հետ հա-
մաձայնվելուց յետոյ, երեք կառավարու-
թիւնները յանձնեցին իրանց զեպանեան-
րին դիմել սուլթանին միջնորդներին հա-
մանման յիշատակագրելով և պահանջել
լիակատար լեֆորմներ Հայաստանի համար:

Այդպէս վարվելով, պետութիւնները գոր-
ծադրել են միայն իրանց իրաւունքը: Բեր-
լինի դաշնագրի 61-րդ յօդուածը, որ պար-
տաւորացնում է Բ. Դրան մոյնի վերանո-
րոգութիւններ Հայաստանի մէջ, երբեք չէ
իրագործվել. ոչ մի միջոց ձեռք չէ առն-
վել ազատելու քրիստոնեաներին թիւրքերի
սոսկալի բռնակալութիւնից և հարստա-
հարութիւններից:

Վերջին 15 տարիների ընթացքում միմիայն
Անգլիան երբեմն-երբեմն դիմումներ է արել
այդ մասին Բ. Դրան: Սակայն Բերլինի դաշ-
նագիրը ստորագրող բոլոր միւս պետու-
թիւնները իրանց յետ էին պահում այդ
քայլն անելուց, փոխանալով որ Բոսֆորի
ափերին նոր բարդութիւններ առաջ կը
գան և հռչակաւոր արեւելեան հարցը նո-
րից հրապարակ կը դադարէ...

Եւրոպական կարենէաների այդ տեսակ
ներդաւանութիւնը թիւրքերը նկատեցին
իրեն թոյլութիւն ամեն բան անելու: Եւ
այդպէս էլ վարվեցին նրանք: Անշուշտ Սա-
սունի գնդաւորների ինչպէս մեղադրելու Աբ-
դուլ-Համիդին, որ նա է այդ կոտորածի
հրամանը տուել, բայց այսօր հաստատ է
այն փաստը, թէ հրամանը Կ. Պոլսից
էր արտաքին գործերի կար առաջին առիթից
օգուտ քաղել իր լաւ դաս տալու Սասունի
գնդաւորին և արեան մէջ խեղդելու նրան,
որովհետեւ այդ գնդաւորը նկատված է իրեն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐԻՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ VIII

Մի կարեւոր հարց, որ դեռ չէ պարզված ճշը-
գործն և երկի շուտով էլ չի պարզվել, այն է
թէ իր օրը ողբան է հայոց թիւը Փաք-Ասիայում
և առանձնապէս Հայաստանում:

Երբ վերջին ուսումնարանական պատերազմից յե-
տոյ հայկական ինդիւիդը եւրոպական ուղադրու-
թիւն դրանց, Կ. Պոլսի գեղատեսչական և յառ-
կապէս անգլիական դեսպանը իրանց հիւպատո-
սարանների և attaché-ների միջոցով աշխատե-
ցին ձեռք բերել այս մասին ճիշդ տեղեկութիւն-
ներ և նրանք ամենամեծ մասով գիտեցին տե-
ղական գնաւաւան իշխանութիւններին. իբրեւ
պաշտօնական աղբիւրի, մի և նոյն ժամանակ
հաղորդելով կողմնակի աղբիւրների տուած ծա-
նոթութիւնները, բայց այս վերջինները ներկա-
յայտեցան իբրեւ տարակուսական: Կ. Պոլսի հա-
յոց պատրիարքարանում անշուշտ կայ որոշ հա-
շիւ տաճկաբնակ հայոց թիւի, բայց նա էլ հրա-
տարակութեան չէ տուած մինչև հիմա:

Այժմ, երբ Սասունի կոտորածը նորից դար-
ժեցրեց հայոց հարցը, այս ինդիւիդ ևս լուրջ ու-
շադրութեան առարկայ եղաւ և եւրոպական
դեսպանները դարձեալ դիմեցին պաշտօնական
և կողմնակի աղբիւրներին, և այս անգամ միայն
լուսաւորչական հայոց թիւի համար չէր: Մեզ
հաստատ աղբիւրից յայտնի է, որ Պոլսի իտալա-
կան դեսպանը ուղեւ է իմանալ, թէ Բրչայի է
կաթովիկ հայերի ընդհանուր թիւը և այս նպա-
տակով տեղեկութիւններ է առել հայ-կաթովիկ
պատրիարքարանից: Նոյն դեսպանատունը ցան-
կացել է այս առիթով տեղեկութիւն ունենալ

նոյնպէս ուսումնարանական կաթովիկ հայոց մասին
և նրան ցոյց է տրված իբրեւ աղբիւր Վիեննայի
Համալսարանի մէջ հրատարակված «Այո-
կան կաթովիկ հայերը» վերնագրով յօդուած-
ները: Թէ ինչ եղանակացութեան են հասած այս
մասին դեսպանատները, այդ մեզ ծանօթ չէ.
բայց որովհետեւ բոլորի համար իբրեւ գլխաւոր
աղբիւր ծառայում է տաճկական պաշտօնական
տեղեկութիւնները, ուստի հարկաւոր է այս աղ-
բիւրի իսկական նշանակութիւնը նախ պարզել:

Թիւրքաց պաշտօնական տեղեկութիւններն ի-
րանց հարստակ հայերի թիւի մասին չափազանց
ձկուն են և ժամանակի ու եղանակի համաձայն
փոփոխութեան են ենթարկվում: Շատ հեռու
չերեքաւ համար, առնենք ներկայ դարը:

1828-ին նշանաւոր «Քէհնաբէյ» փերթէլ է-
ֆեդլին մի տեղեկագիր էր ներկայացրել նոյն
ժամանակի օսմանեան վեհապետ սուլթան Մահ-
մուդ II-ին, տաճկահայաստակ հայոց մասին, որ-
տեղ տեղեկեան համար վտանգաւոր էր ցոյց
տալիս կաթովիկ հայերին, և հրաման ինդիւիդ
այս վերջինների գլխաւորներին մահաւան պատ-
մի ենթարկելու: Այս տեղեկագիրը սկսվում է
այսպէս. «Անտաթուլի (Փաք-Ասիայի) նահանգնե-
րի մէջ ցրված բաւան էր մեծադոյն մասը
բաղկացած է հայերից. այս ժողովուրդը հեռ-
դէհեռ տեղանալով այժմ հասնում է մէկ ու
կէս միլիոն հոգու...» *)

*) Տաճկաց կառավարութեան նոյն ժամանակի
քաղաքագիրն պաշտօնակցի այս տեղեկագիրը մի
գեղեցիկ օրինակ է, թէ կառավարական շրջանի
և պալատի մէջ ինչ հայեացք ունէին առհասա-
րակ քրիստոնեաների և եւրոպացիների վրա.
Ինչպէս նրանց մի քանի կտորները միայն
«Յօդների գաւառիկ հաստը համաձայն է
ուսմաների անհիմն դատարարութեան հետ». «ա-
նի ծաւ ֆրանսիացիք ամեն տեսակ խաղեր
են լարում...». «Գերմանիայի, Վենետիկի, Լե-
հաստանի, Նիդեր-Վիցիլիայի, Սպանիայի և Ֆլե-
րանսիայի թագաւորները և իրանց հարստակները

Ուրեմն մեր դարի սկզբին՝ միայն Փաք-
Ասիայում հայերի թիւը հասնում էր 1 1/2 մի-
լիոնի. սրա մէջ էին հաշուած Կ. Պոլսի և եւրո-
պական Տաճկաստանի հայերը: Այս տեղեկու-
թիւնը, ինչպէս տեսանք, պաշտօնական է:

Քառն և հինգ տարի վերջը մի իտալացի հե-
ղինակ՝ Ուբիչինի, (M. A. Ubicini, Lettres sur
la Turquie 1854), որի՝ Տաճկաստանի վրա գրած
նամակները իբրեւ հեղինակութիւն են ընդուն-
ված, խօսելով հայոց թիւի մասին, ասում է.
«Գիտաւոր է հաստատօրէն որչա՛կ օսմանեան պե-
տութեան մէջ բնակող հայ ժողովրդի թիւը:
2,400,000 թիւը, որ սովորաբար տալիս են նը-
քան և որը տուած եմ նաեւ ևս, պաշտօնա-
կան հաշիւ են իր վրա հիմնվում. — միայն
մօտաւոր արժէք ունի և թիւքաց այդ պաշ-
տօնական աղբիւրները քննադատելուց յետոյ ա-
սում է. «Այս բոլոր պատճառների համար իրա-
ւունք ունենք եղանակելու, թէ այդ թիւը՝
2,400,000, պէտք է իրական թիւից նուազ
համար վիշ: Ուրեմն նոյն իսկ 1854-ին տա-
րակուսակա համարված այդ պաշտօնական
աղբիւրի համեմատ, հաշուած էին, որ Փաք-Ա-
սիայում բնակվում էր երկու միլիոն հայ և
Բուլղարիայում կամ եւրոպական Տաճկաստանում,
400,000, որոնց մէջն էին նաեւ սլաւոնները:

Ենթադրվում են Հոսօմի պապի կրօնին և
յայտնի են կաթովիկ անուամբ. և որովհետեւ
պապի կրօնը իսկապէս կանոններին համեմատ
այս կաթովիկների կիները երեւանք չեն ծած-
կում, սրտքին ձուլ են ուտում... ուստի հայ
ժողովրդի մի մասը Ֆրանսիայի քահանաների
հաղար տեսակ խաղերով խնամելով հոգրով կաթո-
լիկ է դարձած, խաղերով խնամելով, որոնք կատա-
րակաւ համաձայնում են այս խօսքերի
խմբի ամբարշտ ընաւորութեանը, որով նը-
քանից ատելի օրէնքներ երկին, որով նը-
քանում են անարգ անասուններին...» և
այն: Այս մեղանքը 65 տարի առաջ միայն,
իսկ աւելի առաջ ինչ լուծու էր գործածվում,
գիւրդին է հետեցնել:

Անցնում է 40 տարի: Հայերը չարժում են
եւրոպացիների ուշադրութիւնը. նորից հարկ
ծաղում տուեցին, թէ որն է հայոց ճիշդ թիւը
Հայաստանում և ահա 1894 յունիս 27-ին թիւր-
քաց կառավարութիւնը հրատարակում է Կ. Պոլ-
սի լրագիրներում թէ «Ընդհանուր Տաճկաստա-
նում, այսինքն թէ Պոլսում, թէ Փաք-Ասիայում
և թէ եւրոպական թիւրքիայում, տաճկահայաստակ
հայերի թիւն է ընդամենը՝ 997,369. ուրեմն և
ոչ իսկ մէկ միլիոն: Բայց այս 1854-ին
2,400,000 լինելով 40 տարի յետոյ ինչու է
997,000-ի դարձեալ նոյն պաշտօնական աղբիւ-
րի համեմատ:

Անցնում է 6 ամիս: Առաջ է գալիս Սասունի
կոտորածը. յուզվում է հայկական ինքնավարու-
թեան ինդիւիդ և կառավարութիւնը այդ 997,000-ն
էլ շատ է գտնում: Այս տարվայ յունիսի մէջ
թիւրքաց մի գերմանացի պաշտօնատար՝ «Berliner
Tageblatt» լրագրի մէջ, մի խիստ յարձակու-
կան յօդուածում, որտեղ ուրանում է երբ և ինչ
հայկական իշխանութեան հայոց թիւնը,
մի և նոյն պաշտօնական աղբիւրի վրա յենվե-
լով, հռչակում է ի լուր աշխարհին, թէ՛ բո-
վանդակ թիւրքիայի հայոց թիւը...
800,000-ից չէ անցնում: Այս հանձարեղ
յօդուածը այնքան է գուր գալիս տաճկաց կա-
ռավարութեան, որ իսկույն ծախաւորում են և
նրա խմբագրին Մէլիքեյի չքանչան են տա-
լիս...

Համեմատենք այդ թիւերը: 1828-ին 1,500,000
հայ. 1854-ին 2,400,000 հայ. 1894-ին 997,000
հայ և 1895-ի յունիսից 800,000 հայ... ցնոր
անօրինութիւն: Եւ միշտ մի և նոյն պաշտօնա-
կան աղբիւրն է խօսողը: Չենք տարակուսում,
որ եթէ վաղը կօնֆէրէնցիա գումարով հայոց
ինդիւի վերջնական լուծման համար, այդ 800,000-ն
էլ պիտի ինչի դան 700,000-ի, որից դուրս
գալով Կ. Պոլսի և չրականների գէթ 300,000

